«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում*

Հաստատություն՝ *Ապարանի թիվ 1 մանկապարտեզ*

Դաստիարակ՝ *Գրիգորյան Թերեզա*

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում 5
Գլուխ 2. Հետազոտական աշխատանք («Սուրբ Զատիկ» ազգային տոնի շուրջ պարապմունքի պլան կրտսեր նախադպրոցական խմբում) 10
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
Գրականության ցանկ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային տոները և ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ:Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդե-սերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը ու ազգային առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն կյանքի և գործունեության կարևոր պահերին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ավարտական աշխատանքի նպատակն է վերլուծել և բացահայտել ազգային տոների և ծեսերի հանդեպ հետաքրքրությունների ձևավորման ուղիները և առանձնահատկությունները կրտսեր նախադպրոցական տարիքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել կրտսեր նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունները,
- դիտարկել ազգային տոների և ծեսերի էությունը և դրանց կիրառման նշանակությունը կրտսեր նախադպրոցական տարիքում,
- վերլուծել ազգային տոների և ծեսերի նկատմամբ հետաքրքրությունների ձևավորման մանկավարժական պայմանները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Աշխատանքի համար հիմք են ծառայել համապատասխան գրականության ուսումնասիրման, համեմատական վերլուծության, առաջավոր փորձի ուսումնասիրման ու ընդհանրացման, զրույցի, դիտման մեթոդները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ուսումնասիրության արդյունքները կարող են հետագայում օգտակար լինել ինչպես նմանատիպ աշխատանք կատարող ուսանողներին, սկսնակ մանկավարժներին և սույն թեմայով հետաքրքրվող անձանց, այնպես էլ կարող են.

- Խթանել նախադպրոցական տարիքի երեխաների հետաքրքրությունը ազգային տոների հանդեպ:
- Նպաստել քննարկվող ոլորտում մանկավարժների գործիմացության բարձրացմանը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾԱՎԱԼՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը կազմված է «ներածությունից», երկու՝ տեսական և փորձարարական գլխուխներից, «եզրակացություններից» և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1. Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Երեխաների զարգացման և դաստիարակության գործում կարևոր և նշանակալից են նախադպրոցական տարիքի հոգեբանության խնդիրները: Փաստն այն է, որ աշխարհը ճիշտ ընկալելու հիմքերը դրվում են դեռ մանկուց: Դրանք հետագայում օգնում են անհատի աշխարհի անհատական պատկերացում կազմելուն, նպաստում են ինքնագիտակցության ձևավորմանը: Հոգեբանությունը ներառում է բազմաթիվ փոխկապակցված բաղադրիչներ, որոնք որոշում են երեխայի զարգացման հաջողության աստիճանը: Իհարկե, բոլոր երեխաները չեն կարող նույնը լինել[1]:

Կրտսեր նախադպրոցական տարիքը նախադպրոցական տարիքի այն շրջաններից վերջինն է, երբ երեխայի հոգեկանում հայտնվում են նորագոյացություններ: Սա հոգեկան տարբեր գործընթացների՝ ուշադրություն, հիշողություն, ընկալում և այլն, և դրանից բխող սեփական վարքագիծը վերահսկելու կարողության զարգացման շրջան է: Կամավորության ի հայտ գալը որոշիչ փոփոխություն է երեխայի գործունեության մեջ, երբ վերջինիս նպատակը ոչ թե իրեն շրջապատող արտաքին առարկաները փոխելն է, այլ սեփական վարքագծին տիրապետելը[2]:

Շարժիչային գործունեությունը ազդում է երեխայի հոգեֆիզիոլոգիական կարգավիճակի ձևավորման վրա: Ուղիղ կապ կա ֆիզիկական պատրաստվածության մակարդակի և երեխայի մտավոր զարգացման միջև, ֆիզիկական ակտիվությունը խթանում է ընկալման և ինտելեկտուալ գործընթացները: Առօրյայում մեծ քանակությամբ ֆիզիկական ակտիվություն ունեցող երեխաներին բնորոշ է ֆիզիկական զարգացման միջին և բարձր մակարդակը, կենտրոնական նյարդային համակարգի վիճակի

---

[1] Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները https://magazinalsu.ru/hy/psihologicheskie-osobennosti-razvitiya-detei-doshkolnogo-vozrasta.html

[2] Горохова М.Ю. Развитие активности и самостоятельности детей дошкольного возраста: монография / М.Ю.Горохова. - Самара: ГОУ СФ ГОУ ВПО МГПУ, 2011. - 104 с.

համապատասխան ցուցանիշները, սրտանոթային և շնչառական համակարգերի զարգացվածությունը, իմունային դիմադրողականության բարձրացումը և հիվանդացության ցածր մակարդակը: Այսպիսով, ավագ նախադպրոցական տարիքում ընդհանուր ֆիզիկական զարգացման ֆոնին բարելավվում է շարժունակությունը, հավասարակշռությունը, նյարդային պրոցեսների կայունությունը, կոփվում է առողջությունը:

Կրտսեր նախադպրոցական տարիքում առաջատար գործունեությունը դերային խաղն է: Երեխան ձգտում է շփվել հասակակիցների հետ: Եթե դիտարկես երեխաներին մեծի մեջ և նախապատրաստական խմբեր, կնկատեք, որ դրանք բաժանվում են փոքր կղզիների: Այս փոքր ենթախմբերը սովորաբար խմբավորվում են ըստ հետաքրքրությունների: Այս կամ այն միկրոկոլեկտիվ ընտրելիս կարևոր դեր են խաղում անձնական համակրանքները: Եվ եթե ավելի փոքր նախադպրոցական տարիքի հոգեբանությունը հիմնված է չափահասի կողմից հավանության արժանանալու անհրաժեշտության վրա, ապա ավելի մեծ երեխաների համար մեծ նշանակություն ունի իրենց անհատականությունը ցուցադրելու հնարավորությունը: Կարիքների բացահայտումը տեղի է ունենում հասակակիցների հետ փոխգործակցության գործընթացում: Նախադպրոցական տարիքի հոգեբանությունն այնպիսին է, որ նրանք առաջին հերթին ձգտում են կոլեկտիվ գործունեության՝ խմբի կողմից ընդունվելու համար: Նրանք պետք է անհատական կապեր հաստատեն, նոր ընկերներ ձեռք բերեն և հարաբերություններ պահպանեն հասակակիցների հետ[3]:

Ազգային տոների, ծեսերի նկատմամբ կրտսեր նախադպրոցական երեխաների հետաքրքրությունների ձևավորման համար, ընդհանուր առմամբ անհրաժեշտ է, որ պարապմունքը բավարարի տվյալ տարիքի երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին: Ամեն մի տարիքի համար համապատասխան տոն կամ ծես

[3] Кожухова Н.Н., Рыжкова Л.А., Самодурова М.М. Воспитатель по физической культуре в дошкольном учреждении: Учебн. пособие для студентов фак. дошк. образования высших пед. учебн. заведений / Н.Н. Кожухова, Л.А. Рыжкова, М.М. Самодурова. - М.: Академия, 2002. - 316 с.

ընտրելիս պետք է ելնել մանկավարժական ընդհանուր սկզբունքներից, աստիճանաբար բարդացնելով՝ հեշտից անցնել դժվարին, պարզից՝ ավելի բարդի[4]: Կազմակերպված տոնը կամ ծեսը պետք է լինի մատչելի տվյալ տարիքի ամեն մի երեխայի համար՝ իր կանոնների բարդությամբ, ծավալով ու գործողությամբ: Խաղերն ընտրելիս պետք է հաշվի առնել հետևյալ պայմաններն ու պահանջները.

- Երեխայի տարիքային առանձնահատկությունները,
- Երեխայի հոգեբանական առանձնահատկությունները,
- Խմբում երեխաների քանակը,
- Երեխաների ֆիզիկական զարգացվածության մակարդակը,
- Միջանձնային հարաբերությունները խմբում:

Սյուժետային ազգային տոների դեպքում, հաշվի պետք է առնել որքանով է երեխան ընբռնում իր դերը: Առավել հասկանալի դարձնելու համր մանկավարժն անցկացնում է նախապատրաստական աշխատանքեր՝ կարդում է գեղարվեստական գործեր, կազմակերպում է բնության դիտում, մարդկանց գործունեությունը տարբեր մասնագիտություններում, ցուցադրում է մուլտֆիլմեր և այլն: Ուշադրություն պետք դարձվի նաև կազմակերպված ծեսի ժամանակ առկա ատրիբուտներին, որոնք պատրաստվում են երեխաների հետ միասին կամ նրանց ներկայությամբ՝ կախված տարիքից:

Ազգային տոնի կամ ծեսի ընտրությունը: Ազգային տոներն ընտրվում են համապատասխան դաստիարակության խնդիրների, երեխաների տարիքային առանձնահատկությունների, նրանց առողջական վիճակի, պատրաստվածության: Ի նկատի են առնվում ծեսի անցկացման վայրը, օրվա ռեժիմը, տարվա եղանակը և այլն: Պետք է հաշվի առնել նաև երեխաների կազմակերպվածության և կարգապահվածության

[4] Степаненкова Э.Я. Подвижные игры как средство гармонического развития дошкольников //Дошкольное воспитание / Э.Я.Степаненкова. - 1995. - №12. - с.24.

աստիճանը, եթե այն թերանում է, ապա սկզբից հարկավոր է կազմակերպել ավելի քիչ շարժուն գործողություններ ընդգրկող տոներ[5]:

Տոնի կամ ծեսի վրա երեխաների ուշադրությունը հրավիրելու համար դաստիարակը պետք է ձեռնպահ մնա հարկադրանքի կիրառումից: Եթե պարապմունքը երեխաների ընդհանուր խմբի մոտ հետաքրքրություն չի առաջացնում, ապա անհրաժեշտ է սկսել 3-5 երխաների հետ, ապա աստիճանաբար նրան են միանում մնացածները: Կարելի է որևէ խաղալիքով կամ ուշագրավ առարկայով երեխաների ուշադրությունը գրավել: Ընդ որում, այս գործընթացը պետք է լինի արագ, տևի առավելագույնը 1-2 րոպե, որպեսզի նրանք չկորցնեն հետաքրքրությունը պարապմունքի նկատմամբ: Որքան դանդաղ ընթանա տոնի կամ ծեսի նախապատրաստության գործընթացը, այնքան երեխաները կկորցնեն հետաքրքրությունը խաղի նկատմամբ: Մինչև խաղի բուն ընթացքին անցնելը նախ պետք է երեխաների մոտ հետաքրքրվածություն առաջացնել պարապմունքի նկատմամբ: Օրինակ՝ կարլի է կարդալ բանաստեղծություն համապատասխան թեմայից, ցույց տալ նկարներ, առարկաներ, պատմել համպատասխան պատմություն:

Պարապմունքի սկզբում դաստիարակն ինքն է իր վրա վերցնում գլխավոր դերը, իսկ ապա, երբ երեխաները ինտեգրվում և հարմարվում են տոնին կամ ծեսին, իրենց է հանձնարարում: Դեռ բացատրման ժամակ ընտրում է վարողին և մնացածին կանգնեցնում է իրենց տեղերում, կարող է և վերջին նպատակի համար օգտագորել նաև պատահականության սկզբունքը: Խաղահրապարակը ձևավորելը կարելի է կատարել կամ բացատրման ժամանակ կամ դրանից առաջ: Իսկ օգտագործվող առարկաները սովորաբար պարապմունքից առաջ են բաշխվում, իսկ երբեմն երեխաներն իրենք են ընթացքում վերցնում:

Ազգային տոնը կամ ծեսը ղեկավարում է դաստիարակը և նրա դերակատարումը կախված է ազգային տոնի և ծեսի բնույթից, խմբի տարիքային և քանակային թվից, մասնակիցների վարքագծից. որքան փոքր են այնքան մեծ է դաստիարակի

[5] Горохова М.Ю. Развитие активности и самостоятельности детей дошкольного возраста: монография / М.Ю.Горохова. - Самара: ГОУ СФ ГОУ ВПО МГПУ, 2011. - 104 с.

դերակատարումը խաղի վարման մեջ: Այս տարիքային խմբերում դաստիարակը սկզբում իր վրա է վերցնում գլխավոր դերը, իսկ ապա այն հանձնում է մասնակիցներից որևէ մեկին: Դաստիարակը մասնակցում է երբ զույգ չի լինում, բացի այդ նրա մասնակցությունը որոշակի հետաքրքրություն է առաջացնում պարապմունքի նկատմամբ:

Ազգային ծեսերը և տոներն անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս որպե՛ս ստեղծագործ, որպե՛ս գործիչ, որպե՛ս քննադատ Ա.Կ.Գեղամյան, [Ծեսը, ծիսակարգը և սովորությունը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ]: Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերը այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Այն ծեսերը և տոները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռևս 100 տարի առաջ, շատ քիչ են պահպանվել մեր կենցաղում: Հայաստանի Հանրապետության առանձին մարզերում շարունակում են նշել Վարդավառը, որոշ տեղերում (մասնավորապես Գեղարքունիքի մարզ), մասամբ նշում են Համբարձումը, իսկ Զատկի, Տյառնընդառաջի, Սուրբ Խաչի որոշ ծեսեր պահպանվել են համարյա ամենուր: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տոնացույցում բացահայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արևի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նվիրված հանդիսություններ: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձևավորման շրջանից և պատմության ընթացքում ձևափոխությունների ենթարկվելով մինչև այսօր հնարավորություն են տալիս վերլուծել և թափանցել մեր մշակույթի վաղնջական շերտերը:

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք («Սուրբ Զատիկ» ազգային տոնի շուրջ պարապմունքի պլան կրտսեր նախադպրոցական խմբում)

Նախադպրոցական երեխաների հայեցի դաստիարակության վառ օրինակ է Զատկի տոնակատարությունը մանկապարտեզում: Մինչ տոնը որպես ցերեկույթ անցկացնելն անհրաժեշտ է պահպանել ծիսկարգը և երեխաներին ընկալելի դարձնել դրա բովանդակությունը: Դա կատարեցինք ավագ խմբում թեմատիկ ինտեգրված պարապմունքի միջոցով: Կիրառեցինք ԳՈՒՍ մոդելը, խմբային աշխատանքի, խաղային մեթոդներով: Շատ կարևոր է թեմայի նախնական պլանավորումը և պարապմունքների անցկացումը:

Նպատակը

. Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները ծեսերի և ազգային տոների մասին՝ մասնավորապես Զատիկի: Սովորեցնել կառուցել քերականորեն ճիշտ, արտահայտիչ և բովանդակալից խոսք: Դաստիարակել հայրենասիրություն:

Ընթացքը

. Դեռևս Ծաղկազարդին սկսեցինք ցորենացանը և մինչև Զատիկ խնամեցինք: Մանկապարտեզ հրավիրեցինք համայնքի քահանային: Շատ հետաքրքիր և ուսուցողական զրույց ունեցանք: Սովորեցինք տերունական<<Հայր Մեր>> աղոթքը և ստացանք Տեր Հովսեփի օրհնությունը: Թեմատիկ շաբաթվա մասին տեղյակ պահեցինք ծնողներին և խնդրեցինք աջակցել ու անմիջական մասնակցություն ունենալ մեր արարողակարգին:

Շաբաթը սկսեցինք զրույցով, որի նպատակն էր երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի՝ մասնավորապես Սուրբ Զատկի մասին:

Զարգացրինք թիմային և զույգերով աշխատելու կարողություններ, սովորեցինք խմբային աշխատանքի պարզ կանոններ, հարստացրի բառապաշարը նոր բառերով և բառակապակցություններով: Իրար ավետեցինք <<Քրիստոս հարյավ ի մեռելոց>>, պատասխանելով<<Օրհնյալ է հարությունը Քրիստոսի>>:

Խմբասենյակի պատերին փակցրեցինք Զատկական թեմայով պաստառներ, բացիկներ, երեխաների կողմից պատրաստված խմբային աշխատանքներ, անհատական նկարներ:

Սեղաններին դրված են ծլեցրած ցորեններ, որոնց մեջ դրեցինք ներկած ձվեր: Պատրաստել ենք ցանկությունների ծառ, որը նույնպես երեխաներն են ձևավորում իրենց պատրաստած ձվերով և ցանկություններով: Խմբասենյակը ձևավորված է ուռենու ճյուղերով, ձեռագործ տիկնիկներով՝ պատրաստված ազգային տարազի մոտիվներով, և Սուրբ Զատիկը խորհրդանշող այլ աքսեսուարներով: Սեղանների դրված են Զատկի կերակրատեսակներ, որոնք պատրաստել են մեր սաների տատիկներն ու մայրիկները՝ գաթա, հալվա, չամչով փլավ, ածիկ, փոխինդ, գունավոր ձվեր, տապակած կանաչի:

Պարապմունքի ընթացքում լսվում է մեղմ եկեղեցական երաժշտություն, և հնչում են հետևյալ խոսքերը:

Բոլոր աշխարհ կբերկրի,

Զատկի զանգակք կհնչեն,

Շուշաններն էլ ցնծումով լի

Գարունը կողջունեն:

Եվ կհնչի զանգակը խոշոր,

Կարձագանքեն լեռ, սար ու ձոր,

Մարդիկ' խայտուն, սիրով ջերմիկ,

Ինչ գեղեցիկ է այս Զատիկ:

Երեխաների պարզ ու մատչելի ներկայացվեց, որ Զատիկը եղել է նախաքրիստոնեական շրջանի տոներից մեկը, որը խորհրդանշում է աշխարհի նորացումն ու բնության զարթոնքը: <<Զատիկ>> բառը կապվում է տիեզերական արարչագործության հետ և նշանակում է <<զատվել>>, <<բաժանվել>>: Քրիստոնեության շրջանում այն նոր բովանդակություն է ստացել: Քրիստոսի մահը և հարությունը զուգորդվել են սերմը հողի մեջ թաղելու (մահ) և նրա ծլարձակման (հարություն) հետ: Երեխաների հետ ծանոթացանք և խաղացինք զատկական ծիսախաղեր՝ ձուկռվոցի, ձուպտտոցի, ձուգլորոցի:

Ծանոթացանք նաև, որ Զատիկի ծեսի գլխավոր խորհրդանիշը ձուն է: Ձուն առանձնահատուկ տեղ է գրավել պտղաբերության հնագույն ծեսերում: Այն համարել են աշխարհի օրինակ. Դրսի կեղևը՝ երկինք, սպիտակ թաղանթը՝ օդ, սպիտակուցը՝ ջուր, իսկ դեղնուցը՝ երկիր: Ձուն համարել են նաև հարության խորհրդանիշ, որը փայփայելով նոր կյանքի սերմը, երկու ծնունդ է ունենում: Երեխաները արվեստի կենտրոնում ձուն նախշազարդեցին ձվի սպիտակուցով և պատկերազարդ անձեռոցիկներով: Ձու ներկելը կարևոր ավանդույթ է Հրաշափառ հարության տոնին: Երեխաները ձուն ջարդեցին և ուսումնասիրեցին կառուցվածքը: Ցորենի հատիկներով կառուցեցին յոթ ձու՝ աճման և նվազման կարգով: Խմորից ծեփեցին ձվեր, ապա կերտաձողով նախշազարդեցին դրանք, իսկ չորանալուց հետո ներկեցին:

Հաջորդիվ երեխաներին առաջարկվեց հետևյալ հանելուկները՝

Ուլուլիկ-կլորիկ,
Ոչ դուռ ունի, ոչ՝ երդիկ: (Ձու)

Այն ի՞նչն է, ինչը,
Շնչավորից անշունչն ելավ,
Անշունչից էլ'
շնչավորը: (Ձու)

Այնուհետև դաստիարակը պարապմունքն անփոփում է հետևյալ բանաստեղծությամբ:

Կարմիր-կանաչ ձվիկներով
Խաղանք ուրախ ու կռվարար,
Ձա՛ն, ինչ լավ է, որ Զատիկ է,
Սեղաններին շատ ձվիկ է:
Դե, շու՛տ արեք, շու՛տ արեք,
Բոլորդ այստեղ եկե՛ք,
Ձու՛ հասցրեք, շու՛տ բերեք,

Եկե'ք արագ հավաքվենք,

Մեկս մեկու մենք հաղթենք:

Տոն է այսօր, ուրախություն,

Սեղաններն առատ, լիություն,

Դեղին, կարմիր, կապույտ, կանաչ

Զվիկներն են մեզ ճանաչ:

Տոնական են սեղանները,

Գաթա, հալվա, չամիչ, փլավ,

Ուտելիքներ շատ համեղ,

Ի նչ լավ է, լավ, եկե'ք այստեղ:

«Քրիստոս հարյավ ի մեռելոց,

Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Այնուհետև սկսվում է տոնական ճաշի ժամը:

Զատկի տոնակատարությունը սրտամոտ է երեխաներին: Այն հայեցի դաստիարակության և կրթության, գեղագիտական, բարոյական, ինչու չէ, նաև պատմական անցյալը իմանալու, գնահատելու և սովորելու տեսակետից, հրաշալի դասեր են և հարստացնում են մանկական մաքուր ու ջինջ հոգեաշխարհը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, գիտամեթոդական համապատասխան գրականության ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակա գիտամեթոդական համապատասխան գրականության ուսումնասիրության, ինչպես նաև կատարած փորձարարական աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի յուրացումն է, երաժշտական ճաշակի զարգացումն է:

2. Առանձնահատկությունը այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մարդկանց, նրանց մտքերը, գաղափարները, միասնական գործողությունները:

3. Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատ-կություններ, որոնք պահանջում են տեխնոլոգիական, երաժշտական, պատմական, լեզվական լրացուցիչ կրթության լուծումներ:

4. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների զարգացումը բազմակողմանի է, քանի որ ազգային ոգով զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները:

Գրականության ցանկ

1. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները https://magazinalsu.ru/hy/psihologicheskie-osobennosti-razvitiya-deteidoshkolnogo-vozrasta.html

2. Горохова М.Ю. Развитие активности и самостоятельности детей дошкольного возраста: монография / М.Ю.Горохова. - Самара: ГОУ СФ ГОУ ВПО МГПУ, 2011. - 104 с.

3. Кожухова Н.Н., Рыжкова Л.А., Самодурова М.М. Воспитатель по физической культуре в дошкольном учреждении: Учебн. пособие для студентов фак. дошк. образования высших пед. учебн. заведений / Н.Н. Кожухова, Л.А. Рыжкова, М.М. Самодурова. - М.: Академия, 2002. - 316 с.

4. Степаненкова Э.Я. Подвижные игры как средство гармонического развития дошкольников //Дошкольное воспитание / Э.Я.Степаненкова. - 1995. - №12. - с.24.

5. https://qahana.am/